ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-1107[1]-28.10.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3 թիվ ՀՕ-169 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 22-րդ կետով .

22) տեղեկություններ իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին.

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածը լրացնել նոր 11 մասով

11. Օտարերկրյա իրավաբանական անձի ռեդոմիցիլացման արդյունքում իրավաբանական անձի նախնական գրանցման համար սույն օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացվելու դեպքում, եթե առկա չեն 36-րդ հոդվածով նախատեսված մերժման հիմքերը, պետական գրանցումն իրականացնող մարմինը եռօրյա, իսկ ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա, ժամկետում իրականացնում է իրավաբանական անձի նախնական գրանցում, տեղեկատվական համակարգը գրանցվող իրավաբանական անձին օրենքով նախատեսված կարգով ինքնաշխատ կերպով շնորհում է գրանցման համարը, հարկային մարմնի տրամադրած՝ հարկ վճարողի հաշվառման համարը և սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համարը, ինչպես նաև տրամադրում է նախնական գրանցման վերաբերյալ քաղվածք: Ռեդոմիցիլացման նախնական գրանցման հետ միաժամանակ կամ դրանից հետո ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի դիմումի հիման վրա նրան տրամադրվում է շարունակականության նախնական փաստաթուղթ: Օտարերկրյա պետությունում օտարերկրյա իրավաբանական անձի գրանցումը դադարելու կամ ռեդոմիցիլացված լինելու վերաբերյալ տեղեկությունները գրանցելու վերաբերյալ փաստաթուղթը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում իրականացվում է օտարերկրյա իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձի ռեդոմիցիլացման պահը նշելով.

ա. իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման գրանցման պահը, կամ

բ. իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման նախնական գրանցման պահը, եթե իրավաբանական անձի լիազոր մարմնի կողմից ներկայացված է ստորագրված հայտարարություն Հայաստանի Հանրապետությունում նախնական գրանցումից սկսած մինչև Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման գրանցման պահը գործարքներ չկնքելու վերաբերյալ:

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր 8.1 գլխով:

ԳԼՈՒԽ 8.1. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՌԵԴՈՄԻՑԻԼԱՑՈՒՄԸ

Հոդված 36.1. Օտարերկրյա իրավաբանական անձի ռեդոմիցիլացումը Հայաստանի Հանրապետությունում

1. Օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման համար կառավարության լիազոր անձին կամ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին օտարերկրյա իրավաբանական անձը ներկայացնում է՝

ա. նախնական գրանցման դիմում, որը պետք է ներառի.

1. իրավաբանական անձի առկա անվանումը և նշում նախընտրելի ֆիրմային անվանման վերաբերյալ (նոր անվանման նշումը համարվում է անվանման հայտի ներկայացում),

2. հիմնական գործունեության տեսակը ըստ գրանցումն իրականացնող մարմնի ներկայացրած դասակարգման,

3. այն իրավակարգը, որի իրավասության ներքո օտարերկրյա իրավաբանական անձը գրանցված է,

4. այն կազմակերպաիրավական ձևը, որը ռեդոմիցիլացման արդյունքում համապատասխանում է իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևին իր նախկին գրանցման իրավակարգում.

բ. իրավաբանական անձի օրենքով սահմանված իրավասու մարմնի՝ իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին որոշումը կամ արձանագրությունը կամ դրա քաղվածքը, որը, ի լրումն սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված պահանջների, պետք է պարունակի տեղեկություններ հետևյալի մասին.

1. Դրույթներ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման վերաբերյալ.

2. Դրույթներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևի ընտրության վերաբերյալ.

3. Դրույթներ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի անվանման վերաբերյալ.

4. Դրույթներ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի կանոնադրությունը հաստատելու վերաբերյալ:

գ. քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը կամ դրանց համապատասխան քաղվածքները.

դ. տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի վերաբերյալ՝ անձնագրային տվյալները, ինչպես նաև հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում).

ե. պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ.

զ. ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան ընդունված կանոնադրությունը առնվազն երկու օրինակից.

է. եթե ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի մասնակիցների կազմում առկա է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ, ապա անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն մասնակից իրավաբանական անձի վերաբերյալ՝ իրավաբանական անձի անվանումը և պետական գրանցման համարը.

ը. եթե ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի մասնակիցը օտարերկրյա իրավաբանական անձ է, ապա ներկայացնում է նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ մասնակից օտարերկրյա իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները), եթե ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի մասնակիցը ֆիզիկական անձ է, ապա ներկայացնում է տվյալ անձի անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը (սույն կետը չի տարածվում այն ռեդոմիցիլացվող օտարերկրյա իրավաբանական անձանց վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացվելուց հետո ունենալու են այնպիսի կազմակերպական-իրավական

ձև, որի մասնակիցների կամ հիմնադիրների ցուցակը չի վարվում գրանցում իրականացնող մարմնի կողմից).

««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 36.1-ին հոդվածի 4-րդ մասի «ը» կետում ամրագրված կարգավորման պարագայում բաց են մնում այն տեսակի իրավաբանական անձանց մասնակիցների կամ հիմնադիրների կամ բաժնետերերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և գրանցման կարգը, մասնավորապես՝ բաժնետիրական ընկերությունների մասով, որոնց վերաբերյալ տեղեկությունները վարվում են ռեեստրի կողմից: Առաջարկում ենք այս մասով ևս նախատեսել համապատասխան կարգավորումներ:

թ. մինչև ռեդոմիցիլացումը ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի գործող կանոնադրության օրինակը.

2. Հայաստանի Հանրապետություն ռեդոմիցիլացվող օտարերկրյա իրավաբանական անձի ռեդոմիցիլացման գրանցման նպատակով վերընշված տվյալները, տեղեկությունները, պատշաճ վավերացված և հայերեն թարգմանված փաստաթղթերը գրանցումն իրականացնող մարմնին ներկայացնելուց հետո, եթե բացակայում են օտարերկրյա իրավաբանական անձի՝ դեպի Հայաստանի Հանրապետություն ռեդոմիցիլացումը բացառող հիմքեր, գրանցումն իրականացնող մարմինը իրականացնում է ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի նախնական գրանցում և տրամադրում է համապատասխան քաղվածք գրանցամատյանից:

Նախնական գրանցման դիմումի հետ միաժամանակ կամ դրանից հետո ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի ռեդոմիցիլացման դիմումի հիման վրա գրանցում իրականացնող մարմինը իրավաբանական անձին տրամադրում է շարունակականության նախնական փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացվելու վերաբերյալ:

3. Օտարերկրյա իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման գրանցման համար օտարերկրյա իրավաբանական անձը դիմումին կից ներկայացնում է.

ա. օտարերկրյա պետությունում օտարերկրյա իրավաբանական անձի գրանցումը դադարելու կամ ռեդոմիցիլացված լինելու վերաբերյալ տեղեկությունները գրանցելու վերաբերյալ փաստաթուղթ.

բ. ըստ անհրաժեշտության՝ օտարերկրյա իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացումը նախնական գրանցման պահից գրանցելու համար ռեդոմիցիլացվող իրավաբանական անձի լիազոր մարմնի հայտարարությունն առ այն, որ իրավաբանական անձը ռեդոմիցիլացման նախնական գրանցման վերաբերյալ փաստաթուղթը ստանալուց հետո չի իրականացրել և չի իրականացնի որևէ գործարք մինչև օտարերկրյա իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման գրանցումը:

4. Օտարերկրյա իրավաբանական անձի՝ օտարերկրյա պետությունում գրանցումը դադարելու կամ այդ երկրից ռեդոմիցիլացման վերաբերյալ փաստաթղթի հիման վրա Հայաստանի Հանրապետության գրանցում իրականացնող մարմնի կողմից գրանցամատյանում իրականացվում է օտարերկրյա իրավաբանական անձի Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման գրանցում և տրամադրվում է շարունակականության փաստաթուղթ:

Հոդված 36.2 Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի՝ օտարերկրյա պետությունում ռեդոմիցիլացումը.

1. Հայաստանի Հանրապետության ռեդոմիցիլացվող իրավաբանական անձը մինչև օտարերկրյա պետությունում ռեդոմիցիլացումը կառավարության լիազոր անձին կամ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին ներկայացնում է՝

ա. դիմում ռեդոմիցիլացման մտադրության մասին,

բ. ռեդոմիցիլացման վերաբերյալ իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունը՝ որը պետք է դրույթներ պարունակի այն օտարերկրյա պետության մասին, որտեղ իրավաբանական անձը պատրաստվում է ռեդոմիցիլացվել, ինչպես նաև ռեդոմիցիլացման կապակցությամբ իրավաբանական անձի պարտատերերին ծանուցելու ժամկետի վերաբերյալ, եթե այդ ժամկետը գերազանցում է երեք ամիսը.

գ. օրենքով սահմանված կարգով պարտատերերին (բացառությամբ Հայաստանի Հանրապետության) ծանուցումն իրականացնելու վերաբերյալ ապացույցները.

դ. պետական տուրքի վճարման ապացույցը.

ե. օտարերկրյա օրենսդրության համապատասխան տվյալ երկրում ռեդոմիցիլացման հնարավորության վերաբերյալ փաստաթուղթ:

2. Հայաստանի Հանրապետության ռեդոմիցիլացվող իրավաբանական անձը ռեդոմիցիլացման գրանցման նպատակով գրանցում իրականացնող մարմին ներկայացնում է.

1) դիմում՝ ռեդոմիցիլացման մասին, որը պետք է ներառի.

1. իրավաբանական անձի անվանումը և գրանցման համարը.

2. տեղեկություններ այն պետության մասին, որտեղ ռեդոմիցիլացվում է իրավաբանական անձը.

3. տեղեկություններ ռեդոմիցիլացման արդյունքում ձեռք բերվող կազմակերպական-իրավական ձևի և իրավաբանական անձի անվանման մասին.

4. ռեդոմիցիլացված կազմակերպության օտարերկրյա պետությունում գործունեության կամ գրանցման հասցեն, ինչպես նաև էլեկտրոնային փոստը և հեռախոսահամարը՝ առկայության դեպքում.

5. օտարերկրյա պետության գրանցումն իրականացնող մարմնի անվանումը, հասցեն.

2) պատշաճ վավերացրած և հայերեն թարգմանված պաշտոնական փաստաթուղթ օտարերկրյա պետության համապատասխան իրավասու մարմնից տվյալ երկրում իրավաբանական անձի ռեդոմիցիլացման հնարավորության մասին.

3) քաղվածք օտարերկրյա պետության առևտրային գրանցամատյանից, կամ շարունակականության փաստաթուղթ, կամ օտարերկրյա պետությունում իրավաբանական անձի իրավական կարգավիճակը հավաստող այլ համազոր փաստաթուղթ.

4) պարտավորությունները վաղաժամկետ կատարելու պահանջ ներկայացրած պարտատերերից տեղեկանք, պայմանագիր կամ այլ փաստաթուղթ պարտավորությունները ամբողջությամբ կատարած լինելու վերաբերյալ կամ համապատասխան դատական ակտ.

5) տեղեկանք Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտից սնանկության վարույթում չգտնվելու և սնանկ ճանաչված չլինելու վերաբերյալ:

6) տեղեկանք Հայաստանի Հանրապետության հարկային մարմիններից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու վերաբերյալ:

7) տեղեկանք Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովից, որ կազմակերպությունը չի հանդիսանում մենաշնորհ կամ գերիշխող ունեցող կազմակերպություն կամ առկա չի տվյալ իրավաբանական անձի մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունենալու վերաբերյալ վարչական վարույթ.

8) տեղեկանք Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից այն մասին, որ կազմակերպությունը չի հանդիսանում կարգավորվող հանրային ծառայությունների ոլորտի մասնակից կազմակերպություն կամ առկա չէ այդ հարցի վերաբերյալ հարուցված և չավարտված վարչական վարույթ:

9) օրենքով սահմանված այլ փաստաթղթեր:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «5»-ից «9-րդ» կետերով նշված փաստաթղթերը դիմող իրավաբանական անձի կողմից չներկայացվելու դեպքում գրանցում իրականացնող մարմինը դիմում ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում նշված փաստաթղթերով հավաստվող հանգամանքների վերաբերյալ հարցում է իրականացնում համապատասխան մարմիններին: Հարցումն ուղարկվում է ստացումը հաստատելու հնարավորություն տվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն ապահովող համակարգի միջոցով: Նշված մարմինների կողմից համապատասխան հարցումների վերաբերյալ պատասխան է տրվում տասնօրյա ժամկետում: Սույն մասով նախատեսված հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում է որպես տվյալ մարմնի կողմից տվյալ իրավաբանական անձի նկատմամբ հարուցված և չավարտված վարչական վարույթի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ համապատասխան պարտավորությունների բացակայության հավաստում:

Հոդված 36.3. Հայաստանում ռեդոմիցիլացման վերաբերյալ տեղեկանք.

1. Գրանցումն իրականացնող մարմինը պարտավոր է անձի դիմումի հիման վրա տրամադրել Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնի հաստատված նմուշային ձևի տեղեկանք իրավաբանական անձանց ռեդոմիցիլացման՝ օրենսդրությամբ սահմանված հնարավորության վերաբերյալ:

2. Նշված տեղեկանքը տրամադրվում է դիմումը ներկայացնելուց մեկ օրվա ընթացքում:

Հոդված 36.4. Հայաստանի Հանրապետությունից դուրս ռեդոմիցիլացման գրանցումը

1. Հայասանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման համար սույն օրենքով սահմանված փաստաթղթերը ստանալուց հետո, եթե առկա չեն սույն օրենքի 36-րդ հոդվածով սահմանված մերժման հիմքերը, գրանցումն իրականացնող մարմինն իրականացնում է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման ընթացքում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների գրանցում, իսկ օտարերկրյա պետությունում տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձի ռեդոմիցիլացման վերաբերյալ ապացույցի ներկայացման դեպքում եռօրյա (իսկ ոչ առևտրային կազմակերպությունների դեպքում՝ տասնհինգօրյա) ժամկետում իրականացնում է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի ռեդոմիցիլացման վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցում: Ռեդոմիցիլացման վերաբերյալ հանրամատչելի տեղեկություններն են Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի անվանումը, գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, ռեդոմիցիլացման արդյունքում օտարերկրյա իրավաբանական անձի անվանումը, գրանցման համարը, գտնվելու վայրը, ռեդոմիցիլացման երկիրը, կոնտակտային տվյալները:

Հոդված 4. Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր «6»-րդ կետով.

6) դիմել է ռեդոմիցիլացվման նպատակով այն պետության իրավաբանական անձ, որը նշված է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված պետությունների ցանկում, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեդոմիցիլացվել Հայաստանի Հանրապետության տարածքում:

Հոդված 5. Օրենքի 66-րդ հոդվածի 1.-ն մասում «ձևավորման կամ փոփոխության դեպքում առևտրային կազմակերպության» արտահայտությունից հետո լրացնել «այդ թվում Հայաստանի Հանրապետություն ռեդոմիցիլացված» արտահայտությամբ:

Հոդված 6. Օրենքը ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
	1	2	3	4
1.	ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Այվազյան	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 5-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Անհրաժեշտ է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող եւ փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաեւ դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		տասներորդ օրը, եթե այդ նորմատիվ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ կամ եթե սույն օրենքով ուղղակի այլ բան նախատեսված չէ: Քանի որ Նախագիծը պարտականություններ է սահմանում իրավաբանական անձի համար, պարտականությունների կատարման կարգ է նախատեսում, առաջարկում ենք Նախագծի 5-րդ հոդվածի «հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերը փոխարինել «հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերով:		
		2. Սույն եզրակացության 1-ին կետով նախատեսված առաջարկությունը վերաբերում է նաեւ ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածին եւ ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածին, քանի որ այս նախագծերը եւս իրավաբանական անձի համար պարտականություններ եւ պարտականությունների կատարման կարգ են նախատեսում:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		3. Նախագծի 1-3-րդ հոդվածներով կատարվող լրացումներն առաջարկում ենք իրականացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 59-րդ հոդվածից հետո, որը վերնագրված է «Իրավաբանական անձի գտնվելու վայրը»: Առաջարկվող փոփոխության արդյունքում առավել կընդգծվի ներմուծվող ինստիտուտի կապն իրավաբանական անձի գտնվելու վայրի հետ կապված	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		կարգավորումների հետ: Բացի այդ՝ կապահովվի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջի իրականացումը, որի համաձայն՝ իրավական ակտի կառուցվածքը պետք է լինի կուռ՝ տրամաբանորեն միասնական, հաջորդական ու համակարգված:		
		4. Նախագծի 1-3-րդ, ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-4-րդ հոդվածների «հետեւյալ խմբագրությամբ» բառերն առաջարկում ենք հանել: Նույնը վերաբերում է նաեւ ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի «հետեւյալ խմբագրությամբ» բառերին: Նախագծի 4-րդ հոդվածում «հետեւյալ» բառն անհրաժեշտ է փոխարինել «նոր» բառով: Սույն կետով նախատեսված առաջարկությունները բխում են Փաթեթն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից, քանի որ դրա համաձայն՝ իրավական ակտում լրացումներ կատարվում են դրանում նոր բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ, նախադասություններ, բառեր կամ թվեր լրացնելու միջոցով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		5. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նոր 62.1-ին հոդվածի 1-ին մասից առաջարկում ենք հանել «կամ իրավակարգի»	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		բառերը, քանի որ իրավաբանական անձի նկատմամբ տարածվում է այն պետության իրավակա ր գը, իրավազորությունը, որտեղ այն օրենքով սահմանված կարգով գրանցված է: Նույնը վերաբերում է նաեւ ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածի «կամ իրավակարգը» եւ «կամ իրավակարգում» բառերին: Իրավաբանական անձանց տեղաշարժի իրականացումը տեղի է ունենում երկու եղանակով՝ ձեւական եւ փաստացի: Եթե ձեւական փոփոխման դեպքում ընկերությունն իր կանոնադրական գտնվելու վայրը հիմնադրման վայրից տեղափոխում է այլ երկիր՝ մի պետության իրավաբանական անձանց գրանցամատյանից դուրս գալով եւ այլ պետության համապատասխան գրանցամատյանում գրանցվելու միջոցով, որի հետեւանքով փոխվում է նաեւ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող իրավունքը, ապա փաստացի տեղաշարժի դեպքում կանոնադրական գտնվելու վայրը մնում է նույնը, եւ այլ երկիր է տեղափոխվում միայն իրավաբանական անձի կառավարման կենտրոնը, հետեւաբար նաեւ իրավաբանական անձի նկատմամբ կիրառման ենթակա իրավունքը եւս մնում է անփոփոխ: Նախագծի տրամաբանությունից հետեւում է, որխնդիր է դրվել կարգավորելու իրավաբանական անձի ձեւական տեղաշարժի հետ կապված հարցերը, հետեւաբար նման պարագայում գրանցման երկրի փոփոխությամբ, այլ կերպ		

		ասած՝ իրավաբանական անձի ռեդոմիցիլացիայի արդյունքում, չի կարող լինել այնպիսի իրավիճակ, երբ կիրականացվի իրավաբանական անձի տեղափոխություն պետության տարածքից՝ առանց իրավակարգի, իրավազորության (jurisdiction) փոփոխության կամ հակառակը: Ուստի իրավիճակի հստակ նկարագրության համար առաջարկում ենք 62.1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետեւյալ կերպ. «1. Իրավաբանական անձի ռեդոմիցիլացումն իրավաբանական անձի տեղաշարժն է մի պետության իրավազորությունից մեկ այլ պետության իրավազորության ներքո, որի հետեւանքով փոխվում է իրավաբանական անձի անձնական օրենքը:»:		
		6. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող՝ 62.1-ին հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության» բառերն առաջարկում ենք փոխարինել «սույն օրենսգրքով նախատեսված» բառերով, քանի որ Հայաստանի Հանրապետության կազմակերպաիրավական ձեւ լինել չի կարող:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		7. Առաջարկում ենք Նախագծում միասնական եզրութաբանություն ապահովելու նպատակով դրա 1-ին հոդվածով լրացվող՝ 62.1-ին հոդվածի 4-րդ մասի «իրավասու մարմնի» բառակապակցությունը, Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 4-րդ մասի «կառավարության լիազոր անձին», Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 7-րդ մասի «կառավարության լիազորված անձին» եւ 9-րդ մասի «օրենքով նախատեսված լիազորված մարմինը» բառերը փոխարինել «իրավաբանական անձանց գրանցող մարմին» բառերով եւ դրանց համապատասխան հոլովաձեւերով՝	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		համապատասխանեցնելով ձեւակերպումներն «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի հետ: Սրանով կիրացվի նաեւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միեւնույն հասկացությունը սահմանելիս կամ միեւնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: 8. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 1-ին մասից առաջարկում ենք հանել «եւ օտար երկրում որպես տվյալ երկրի իրավաբանական անձ գրանցումը դադարեցնելու» բառերը, քանի որ ռեդոմիցիլացիան չի ենթադրում սկզբնական գրանցման վայրի երկրում իրավաբանական անձի լուծարում, այն պարզապես իրավաբանական անձի տեղափոխությունն է այլ երկրի իրավասության ներքո՝ ընթացիկ իրավունքների եւ պարտականությունների ողջ ծավալով: Հետեւաբար իրավաբանական անձի հիմնադրման երկրի իրավասու մարմնի կողմից տրվող՝ իրավաբանական անձի գրացումը դադարեցնելու մասին փաստաթուղթը որպես Հայաստանի Հանրապետությունում վերջինիս ռեդոմիցիլացման հիմք դիտարկելը հակասում է տվյալ ինստիտուտի տրամաբանությանը:	Չի ընդունվել	Որոշ երկրներում
		9. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «դեպի» բառը եւ «Հայաստանի Հանրապետություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում» բառերով, քանի որ ռեդոմիցիլացումը տեղի է ունենում որեւէ երկրում, ոչ թե դեպի այն:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		10. Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 6-րդ եւ 8-րդ մասերում, ինչպես նաեւ Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝62.3-րդ հոդվածի 10-րդ մասում «շարունականության» բառը փոխարինել «շարունակականության» բառով: Նույնը վերաբերում է նաեւ ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-3-րդ հոդվածներին:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		11. Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել այն պետությունների ցանկը, որոնց իրավաբանական անձինք չեն կարող ռեդոմիցիլացվել Հայաստանի Հանրապետությունում: Հասկանալի է, որ այս կարգավորումը Նախագծում տեղ է գտել ազգային անվտանգության նկատառումներից ելնելով: Սակայն անհրաժեշտ է նշել, որ նույն նկատառումներով տեղին կլիներ սահմանել նաեւ հակառակը, այսինքն՝ պետությունների ցանկ, որտեղ չի կարող ռեդոմիցիլացվել Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձը:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		12. Առաջարկում են Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող՝ 62.2-րդ հոդվածի 12-րդ մասում Հայաստանի Հանրապետությունից բացի այլ պետությունումռեդոմիցիլացված իրավաբանական անձի ռեդոմիցիլացման երկիր ոչ թե ամեն դեպքում համարել Հայաստանի Հանրապետությունը, այլ կամ այն երկիրը, որտեղ փաստացի գտնվում է նրա մշտական գործող	Չի ընդունվել	

		մարմինը(ՀՀ քաղ. օր. 59-րդ հոդված), կամ այն երկիրը, որտեղ վերջինն է ռեդոմիցիլացվել իրավաբանական անձը:		
		13. Առաջարկում են Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 2-րդ մասում «ակտիվները» բառից հետո լրացնել «(ակտիվների արժեքի մեջ չի ներառվում այն ակտիվների արժեքը, որոնց վրա, օրենքի համաձայն, բռնագանձում չի կարող տարածվել)» բառերը՝ առաջակվող կարգավորումը նույնացնելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի կարգավորմանը:	Չի ընդունվել	Սկզբունքը այն է, որ ակտիվները լինեն ավելի քան պասիվները, քանի որ տարբեր երկրներում տարբեր ակտիվներ կարող են ընկնել չբռնագանձվողների տակ
		14. Առաջարկում են Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 2-րդ մասում «համայնքի հանդեպ» բառերից հետո լրացնել «բացառությամբ, եթե իրավաբանական անձի ռեդոմիցիլացման համաձայնություն է տրվել համայնքի ավագանում որոշմամբ» բառերը՝ կարգավորման միասնականություն ապահովելու նպատակով, քանի որ Նախագծով նման լիազորություն վերապահվել է կառավարությունը:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		15. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 3-րդ մասում նշվում է ռեդոմիցիլացման մասին որոշում ընդունած կանոնադրությամբ կամ օրենքով դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի պարտականությունների մասին: Իրավաբանական անձի գործունեության առանցքային հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման, ինչպես նաեւ իրավաբանական անձանց առանձին տեսակների առանձնահատկություններից բխող բացառիկ իրավասությունները իրավաբանական անձի համապատասխան մարմիններին վերապահելու մասին նորմերը տեղ են գտել համապատասխան օրենքներում: Հետեւաբար անհրաժեշտ է Փաթեթի մեջ ներառել նաեւ	Ընդունվել է մասնակի	Իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին որոշման կայացումը դրվել է մասնակիցների ընդհանուր ժողովի վրա

		համապատասխան օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծեր՝ ըստ իրավաբանական անձանց առանձին տեսակների՝ սահմանելով ռեդոմիցիլացիայի մասին որոշում ընդունելու իրավասություն ունեցող իրավաբանական անձի մարմինը՝ այն տրամաբանությամբ, որ նման որոշման ընդունման արդյունքում իրավաբանականա անձի մյուս մասնակիցների կամ բաժնետերերի իրավունքները չխախտվեն: Նման կարգավորման բացակայության պայմաններում առաջանում է օրենսդրական բաց:		
		16. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանելով իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին որոշման կայացման դեպքում պարտատերերին իրազեկելու ժամկետները՝ նշվում է «առնվազն երեք ամիս առաջ» արտահայտությունը, սակայն հոդվածի ձեւակերպումից չի բխում, թե ինչից երեք ամիս առաջ պետք է տեղեկացնել, անհնար է որոշել՝ որ պահից է սկսվում եռամսյա ժամկետի հաշվարկը: Հետեւաբար առաջարկում ենք հստակեցնել ինչպես հոդվածի նշված մասը, այնպես էլ 4-րդ մասում տեղ գտած հետեւյալ «ծանուցման ժամկետի ընթացքում» ձեւակերպումը, քանի որ գործող շարադրանքով այդ ընթացքում պարտատերերին իրավունք է վերապահվում կատարելու գործողություններ, սակայն տրամաբանական է, որ մինչեւ ծանուցվելը նրանք, համապատասխան տեղեկատվությանը չտիրապետելու ուժով, չեն կարող որեւէ գործողություններ կատարել: Առաջարկում ենք «ծանուցման ժամկետի ընթացքում» բառերը փոխարինել «ծանուցումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		17. Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասության մեջ	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		«Եթե պարտավորությունն անվիճելի է կամ հիմնավորված է» բառերը փոխարինել «Եթե պահանջը հիմնված է անվիճելի իրավունքի վրա» բառերով՝ համապատասխանեցնելով ձեւակերպումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի կարգավորումներին:		
		18. Առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող 62.3 հոդվածի 7-րդ մասում ամրագրված ռեդոմիցիլացման դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը համալրել, մասնավորապես՝ «պարտավորությունների բավարարման վարաբերյալ» բառերից հետո լրացնել «կամ իրավաբանական անձի պարտատերերին ռեդոմիցիլացման մասին գրավոր տեղեկացնելու, ինչպես նաեւ ռեդոմիցիլացման մասին «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հրապարակային ծանուցում իրականացնելու մասին» բառերը:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		19. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 62.3-րդ հոդվածի 8-րդ մասի «դիմումին չի ներկայացվում» բառերն անհրաժեշտ է փոխարինել «դիմումին կից չեն ներկայացվում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		20. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «11-րդ կետով» բառերն	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		առաջարկում ենք փոխարինել «11-րդ մասով» բառերով: 21. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-3-րդ հոդվածներում պահպանված չեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն՝ հոդվածները, մասերը եւ կետերը համարակալվում են արաբական թվանշաններով: Հոդվածի ենթակետերը համարակալվում են հայերենի այբուբենի փոքրատառերով: Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով: Նշված պահանջներն իրացնելուց հետո անհրաժեշտություն կառաջանա հիշյալ նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 36.2-րդ հոդվածի 3-րդ մասի «2-րդ մասի «ե»-ից «թ» կետերով» բառերը փոխարինել «2-րդ մասի 5-9-րդ կետերով» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		22. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 36.1-ին հոդվածի 4-րդ մասի «ը» կետում ամրագրված կարգավորման պարագայում բաց են մնում այն տեսակի իրավաբանական անձանց մասնակիցների կամ հիմնադիրների կամ բաժնետերերի վերաբերյալ	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		տեղեկությունների հավաքման եւ գրանցման կարգը, մասնավորապես՝ բաժնետիրական ընկերությունների մասով, որոնց վերաբերյալ տեղեկությունները վարվում են ռեեստրի կողմից: Առաջարկում ենք այս մասով եւս նախատեսել համապատասխան կարգավորումներ: 23. ««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող՝ 36.2-36.3-րդ հոդվածների «ՀՀ» հապավումներն առաջարկում ենք բացել՝ դարձնելով դրանք «Հայաստանի Հանրապետության»: Սույն առաջարկությունը բխում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջներից, որոնց համաձայն՝ արգելվում է նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն